ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

ԳՈՒՐԳԵՆ ԳԵՂԱՄՅԱՆ

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը լայն արձագանք գտավ նաև Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում։ Երևանում, Ալեքսանդրապոլում, Ալավերդիում, Կարսում, Սարիղամիշում, Ջալալօղլիում և այլուր գումարված բազմամարդ միտինգներում աշխատավորները ջերմորեն ողջունեցին մեծ Հոկտեմբերի հաղթանակը։

Սակայն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, հեղափոխական Ռուսաստանից կտրվելու հետևանքով, Անդրկովկասում պարարտ հող ստեղծվեց բուրժուաազգայնական կուսակցությունների ակտիվ գործունեության համար։ 1917 թ. նոյեմբերին մենշևիկները, դաշնակցականները և մուսավաթականներն իրենց հակասովետական քաղաքականությամբ Անդրկովկասը մեկուսացրին Սովետական Ռուսաստանից՝ երկրամասը հանձնելով անգլիական և գերմանաթուրքական զավթիչների ողորմածությանը։ Օգտվելով դրանից, թուրքական զավթիչները 1918 թ. փորձեցին հայերի ցեղասպանության իրենց հրեշավոր պլաններն իրագործել նաև Արևելյան Հայաստանում։ Սակայն հայ ժողովրդի հերոսական դիմադրության, Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի, Համամլուի մոտ տարած հաղթանակների շնորհիվ կանխվեց հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը։

Իր ներքին ու արտաքին ապիկար քաղաքականությամբ դաշնակցական կառավարությունը 1918—1920 թթ. քանիցս նոր փորձություններ առջև կանգնեցրեց բազմաչարչար հայ ժողովրդին։ Գնալով անկում էր ապրում և քայքայվում երկրի տնտեսությունը։ Նախապատերազմյան խղճուկ մակարդակի հետ համեմատած արդյունաբերության արտադրանքը կրճատվել էր 12 անգամ։ Բանվորները շնչին աշխատավարձով հարկադրված էին աշխատել 12—16 ժամ։ Ծայր էր առել պրոլետարիատի ապադասակարգայնացման պրոցեսը, որը կարող էր սոցիալական ծանր հետևանքներ ունենալ։ Գյուղատնտեսությունը նույնպես քայքայվել էր։ Հայաստանի սակավահողության պայմաններում դաշնակ խմբապետները զավթել էին պետական ու համայնական լավագույն հողերը, իսկ հարկերի ու բռնագրավումների ծանր լծի տակ հեծող գյուղացիները հարկադրված էին կատարել նրանց բոլոր կամայականությունները։ 1919 թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1913 թ. համեմատությամբ կրճատվեց մոտ 6, իսկ ցանքատարածությունը՝ 4 անգամ[1]։

1918—1920 թթ. Հայաստանի պատմության բնորոշ կողմերից մեկը բանվորա-գյուղացիական զանգվածների օրըստօրե աճող հեղափոխական ակտիվությունն էր, մասսայական շարժումների հարաճուն վերելքը։ Չնայած դաշնակցականների գործադրած բռնություններին, Ռուսաստանում բռնկված հեղափոխական ալիքը օրըստօրե տարածվում էր նաև Հայաստանում և հե-

[1] «Социалистическое строительство Армянской ССР», Ереван, 1940, стр. 23, 27.

ղափոխական պայքարը սաստկանում էր։ Այդ պայքարը գլխավորում էին ընդհատակի ծանր պայմաններում գործող Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, որոնց ազդեցությունն աշխատավորության վրա գնալով ուժեղանում էր։ 1918—1919 թթ. կուսակցական կազմակերպություններ ձևավորվեցին Լոռու, Նոր Բայազետի, Զանգեզուրի և Դիլիջանի գավառներում։ 1919 թ. սկսեց գործել նաև «Սպարտակ» երիտասարդական կազմակերպությունը։ 1920 թ. հունվարին, Երևանում, անլեգալ պայմաններում, գումարվեց Հայաստանի բոլշևիկների կազմակերպության առաջին կոնֆերանսը, որը փաստորեն միավորեց անջատ կազմակերպությունների գործունեությունը և ընտրեց ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտե։

Դաշնակցականների տիրապետության դեմ աշխատավորության պայքարը նոր թափ ստացավ 1920 թ. գարնանը, երբ եղբայրական Ադրբեջանում հաղթանակեցին սովետական կարգերը։ 1920 թ. մայիսմեկյան ցույցերը Հայաստանի քաղաքներում ու գյուղերում անցան հեղափոխական լոզունգներով։ Այդ ցույցերը հատկապես բուռն էին Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում և Նոր Բայազետում։ Բազմիցս խաբված ու կողոպտված հայ աշխատավորությունը որոշակի շրջադարձ էր կատարում դեպի հեղափոխությունը։ Աշխատավորական խաղաղ ցույցերը շուտով վերաճեցին զինված ապստամբության և տարբեր քաղաքներում ռազմահեղափոխական կոմիտեները սովետական իշխանություն հռչակեցին։ Սակայն դաշնակցականները, հենվելով իմպերիալիստական տերությունների օգնության վրա, կարողացան գերազանց ուժեր հանել ապստամբների դեմ և դաժանորեն ճնշել Մայիսյան ապստամբությունը։ Սպիտակ տեռորի զոհ դարձան մայիսյան ապստամբության ղեկավարներ Ս. Ալավերդյանը, Ս. Մուսայելյանը, Բ. Ղարիբջանյանը, Հ. Սարուխանյանը, Ղ. Ղուկասյանը, Ե. Մկրտումյանը և շատ ուրիշներ։ Մայիսյան հերոսական ապստամբությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն էջերից մեկն էր, որը չնայած պարտվեց, բայց խոշոր դեր խաղաց դաշնակցականների տիրապետությունը տապալելու գործում։

1920 թ. աշնանը Հայաստանի բոլոր գավառներում բռնկվեցին ցույցեր ու ապստամբություններ, որոնց մասնակիցները հեռագրերով ու բանագնացներով դիմում էին Ռուսաստանի և Ադրբեջանի սովետական հանրապետություններին և օգնություն խնդրում երկրում սովետական կարգեր հաստատելու համար։ Դրությունն ավելի սրվեց սեպտեմբերին, երբ պատերազմ սկսվեց Թուրքիայի և դաշնակցական Հայաստանի միջև։ Վերջինս իրար ետևից սկսեց պարտություններ կրել և ջարդերի սովոր թուրքական յաթաղանը նորից կախվեց հայ ժողովրդի գլխին։ Բազմատանջ հայ ժողովուրդը կրկին կանգնեց բնաջնջման սպառնալիքի առջև։ Բոլորի համար պարզ էր, որ փրկության միակ հույսը, միակ ելքը երկրում սովետական կարգերի հաստատումն էր։ Մեր ժողովրդի համար այդ օրհասական պահին, կատարելով իր ինտերնացիոնալ պարտքը, ապստամբ հայ աշխատավորներին օգնության հասավ Սովետական Ռուսաստանի հեղափոխական կարմիր բանակը։ 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի Հեղկոմը ի լուր աշխարհի հայտարարեց Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու մասին. «Հայաստանի ապստամբ ժողովրդի կամքով ու ցանկությամբ,— ասված է Հեղկոմի դեկլարացիայում,— Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը այսօրվանից Հայաստանը հայտարարում է սոցիալիստական խորհրդային հանրապետու-

թյուն: Այսօրվանից Խորհրդային Հայաստանի կարմիր դրոշակը պաշտպանելու է նրան աշխատավոր ժողովրդին ճնշողների դարավոր լծից»[2]: Հայաստանում մեծ Հոկտեմբերի հաղթանակը շրջադարձային նշանակություն ունեցավ հայ ժողովրդի կյանքում: Սովետական կարգերի հաստատումով հայ ժողովուրդը վերջնականապես փրկվեց ֆիզիկական բնաջնջման սպառնալիքից և բռնեց վերածննդի ուղին, իսկ Սովետական Հայաստանը դարձավ աշխարհով մեկ սփռված հայության փրկության օրրանը:

Սովետական Հայաստանը շատ ծանր ժառանգություն ստացավ անցյալից: Հիմնովին ավերվել էին Ղափանի և Ալավերդու պղնձահանքերն ու գործարանները, գինու-կոնյակի արտադրությունը: Թուրքերն ավերել ու կողոպտել էին երկաթուղին, վերանորոգման արհեստանոցները: Համատարած ավերումից ղերծ չէր մնացել նաև գյուղատնտեսությունը. ցանքատարածությունները 1913 թ. 345,7 հազար հեկտարից 1919 թ. նվազելով հասել էին 82,7 հազար հեկտարի: Այդ նույն ժամանակ անասնապահության արտադրանքը կրճատվել էր 6,5 անգամ[3]: Թալանվել ու ավերվել էին մթերային խանութներն ու պահեստները, ընկել էր թղթադրամի արժեքը: Աշխատավորության հիմնական մասը հողազուրկ էր կամ գործազուրկ: Հանրապետությունը հեղեղված էր շուրջ 250 հազար գաղթականներով ու որբերով: Ալեքսանդրապոլի գավառը դեռևս գտնվում էր թուրքական օկուպանտների ձեռքում, մենշևիկյան Վրաստանը փաստորեն զավթել էր Լոռու չեզոք գոտին, Զանգեզուրում իշխում էին դաշնակցականները: Հայաստանը փաստորեն մեկուսացված էր սովետական մյուս հանրապետություններից և բավականին ծանր պայմաններում պիտի սկսեր նոր կյանքի կառուցումը: Ամենուր զգացվում էր պարենի, վառելիքի, հագուստի և այլ ապրանքների սուր պակաս: Սովն ու համաճարակային հիվանդությունները հազարավոր զոհեր էին խլում: Այդ ծանր, օրհասական պահին սովետանջ հանրապետությանը օգնության ձեռք մեկնեցին Սովետական Ռուսաստանն ու Ադրբեջանը: Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ ՌՍՖՍՀ Ժողկոմսովետը որոշեց Հայաստանին բաց թողնել 3 միլիոն ռուբլի, կենսամթերքներ ու արդյունաբերական ապրանքներ, դեղորայք և այլն: Սովետական Ադրբեջանը Հայաստան ուղարկեց նավթ, բենզին և այլն: Հայաստանի Հեղկոմը գերմարդկային ճիգեր էր գործադրում պետական ապարատը կարգավորելու և հանրապետության տնտեսական վիճակը որոշ չափով բարելավելու համար: Հեղկոմը աշխատավորությանն իր շուրջն էր համախմբում և նրա գործունեությունը նպատակամղում արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը վերականգնելու, էներգետիկ բազան ամրապնդելու, քաղաքի և գյուղի միջև ապրանքափոխանակությունն ու առևտուրը զարգացնելու համար: Այս ամենը տեղի էր ունենում ներքին և արտաքին հակահեղափոխության դեմ լարված պայքարի բավականին բարդ պայմաններում: Չարաշահելով սովետական իշխանության մեծահոգությունը, նրա գործունեությանը դարանակալ հետևող դաշնակցությունը կարողացավ օգտագործել թույլ տրված սխալները և 1921 թ. փետրվարին հակահեղափոխական ելույթ կազմակերպել սովետական իշխանության դեմ ու ժամանակավորապես զավթել Երևանը: Դաշնակցականները եղբայրասպան պատերազմի մեջ ներքաշե-

---

2 «Коммунист», 1920, № 2.

3 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 64.

լով հայ ժողովրդին՝ լրիվ մերկացրին իրենց «ազգասիրական» դեմքը։ Սակայն դաշնակցականները չէին կարող հետ շրջել պատմության անիվը։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի, Հայաստանի Հեղկոմի հերոսական պայքարի և օգնության հասած XI կարմիր բանակի հարվածների տակ 1921 թ. ապրիլին ավանտյուրիստները հարկադրված էին նահանջել դեպի Զանգեզուր, իսկ հունիսին՝ թողնել նաև Զանգեզուրը։ Այդ ազատագրական պայքարում անգնահատելի էր Ռուսաստանի դերը։ «Միշտ Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ դաշինք կնքելով...,— գրել է Գ. Օրջոնիկիձեն,— հայ բանվորներն ու գյուղացիները ձեռք բերին իրենց ազատագրումը»[4]։ Շուտով ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ Հայաստան ուղարկվեցին զգալի թվով փորձված կուսակցական աշխատողներ (Ա. Մյասնիկյան, Ս. Լուկաշին, Ս. Համբարձումյան, Ա. Կարինյան, Ս. Խանոյան, Ա. Երզնկյան, Ա. Իվանյան և ուրիշներ), որոնք մեծ դեր խաղացին ժողովրդական տնտեսության վերականգնման և պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման գործում։

Քաղաքացիական կռիվներն ավարտելուց հետո ՌԿ(բ)Կ X համագումարը (1921 թ.) նպատակահարմար գտավ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունից անցնել նոր տնտեսական քաղաքականության։ Հայաստանում անցումը նեպին կատարվեց կուսակցության X համագումարից անմիջապես հետո։ Այդ խնդրում, ինչպես ամբողջ Անդրկովկասի, այնպես էլ Հայաստանի կուսակցական կազմակերպությունների համար գործողությունների ծրագիր հանդիսացավ Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի պատմական նամակը։ «Ամենից առաջ կարևոր է,— գրում էր Լենինը,— որ Անդրկովկասի կոմունիստները հասկանան իրենց դրության, իրենց հանրապետության դրության յուրօրինակությունը, ի տարբերություն ՌՍՖՍՀ-ի դրության ու պայմանների, հասկանան մեր տակտիկան նույնությամբ չընդօրինակելու, այլ մտածված կերպով կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձևափոխելու անհրաժեշտությունը»[5]։

Նեպի առաջին տարվա (1921 թ.) արդյունքները՝ գարնանացանի հաջող անցկացումը, պարենհարկի ժամանակին գանձումը, կոոպերացիայի արմատավորումն ու առևտրի ծավալումը, ինչպես նաև արդյունաբերական որոշ ձեռնարկությունների (գինու-կոնյակի, կաշվի և այլն) աշխուժացումը հաստատեցին սովետական իշխանության տնտեսական քաղաքականության ճշտությունը, նպաստեցին պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդմանը և հնարավորություն տվեցին լայն ճակատով պայքարելու ուժերը հօգուտ սոցիալիզմի վերախմբավորելու համար։

Սովետական Հայաստանի տնտեսության վերականգնումն ընթանում էր բոլոր հանրապետությունների փոխադարձ օգնության և օժանդակության պայմաններում։ Փորձը ցույց տվեց, որ ազգային սովետական հանրապետություններն ի վիճակի չեն միայն սեփական ուժերով վերականգնել ավերված տնտեսությունը, հաղթահարել դժվարությունները։ Սովետական հանրապետությունների տնտեսական, քաղաքական, ռազմական և դիվանագիտական ուժերի միավորումը օբյեկտիվ անհրաժեշտություն էր դարձել։ 1918—1921 թթ. ամրապնդվեց սովետական հանրապետությունների ռազմաքաղաքական դաշինքը, 1921—1922 թթ.՝ դիվանագիտականը, իսկ 1922 թ.՝ համաժողովրդա-

4 Գ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1957, էջ 111։
5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 402։

կան շարժում սկսվեց նրանց միավորման՝ ՍՍՀՄ կազմավորման համար։ 1922 թ. դեկտեմբերին սովետական հանրապետությունների կամավոր դաշինքով ստեղծվեց ՍՍՀՄ-ը, որը վճռական նշանակություն ունեցավ բոլոր հանրապետությունների քաղաքական, տնտեսական և կուլտուրական զարգացման գործում։ Այն հաստատեց ազգամիջյան նոր հարաբերություններ, որոնք հենվում են պրոլետարական ինտերնացիոնալիզմի վրա և լայն պայմաններ ստեղծում բոլոր հանրապետությունների զարգացման համար։

Սովետական Հայաստանի աշխատավորները որոշակի հաջողությունների հասան 1921—1925 թթ.։ Հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման հաջողությունները ամփոփվեցին ՀԿ(բ)Կ IV համագումարում, որը տեղի ունեցավ 1925 թ. նոյեմբերին։ Համագումարն ընդունեց, որ ընդհանուր առմամբ ավարտվել է ժողովրդական տնտեսության վերականգնման պրոցեսը և այն հիմնականում հասել է նախապատերազմյան մակարդակին։ Շիրակի ջրանցքի շահագործման շնորհիվ (1925 թ.) զգալիորեն ավելացավ ոռոգելի հողատարածությունը։ Ցանքատարածությունները 1925 թ. կազմում էին նախապատերազմյանի 85,5%-ը[6]։ Գյուղատնտեսական հիմնական կուլտուրաների բերքատվությունը նույնպես մոտենում էր 1913 թ. մակարդակին։ Զգալիորեն ավելացել էր անասունների գլխաքանակը։ Գյուղատնտեսության վերականգնմանն ուղղված միջոցառումներն առաջին հերթին նպաստել էին չքավոր և միջակ գյուղացիների դրության բարելավմանը։ Միայն 1924/25 տնտեսական տարում նրանք պետությունից 4.416 հազար ռուբլի վարկ էին ստացել[7]։ Նրանց շահերն էր պաշտպանում նաև գյուղատնտեսական կոոպերացիան, որն սկսել էր արմատավորվել հայկական գյուղում։

Հանրապետության բանվոր դասակարգի հերոսական ջանքերով 1925 թ. ավարտվեց նաև արդյունաբերության վերականգնումը։ Ուշագրավ է, որ ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանում մեր հանրապետությունում հիմնական աշխատանքները ծավալվել են արդյունաբերական նոր ճեռնարկությունների կառուցման ուղղությամբ։ Այդ տարիներին ստեղծվեցին էլեկտրաէներգիայի, տեքստիլ, քիմիական, շինանյութերի արտադրության ճյուղերը, որոնք հետագայում մեծ դեր խաղացին հանրապետության արդյունաբերության զարգացման գործում։ Զգալի հաջողություններ ձեռք բերվեցին գյուղատնտեսության և գինու-կոնյակի արտադրության վերականգնման գործում։ Էլեկտրաէներգիայի արտադրությունը, 1913 թ. համեմատությամբ, 1925 թ. 3 անգամ ավելացել էր։ Միայն 1924/25 տնտեսական տարում հանրապետության արդյունաբերության և էլեկտրիֆիկացիայի մեջ ներդրվել է 2.706 հազար ռուբլի[8]։ 1925 թ. հանրապետության արդյունաբերության ընդհանուր արտադրանքը հասավ նախապատերազմյանի 75,5%-ին։ Արագ տեմպերով աճում էր նաև հանրապետության բնակչությունը։ Եթե սովետական կարգերի հաստատման ժամանակ հանրապետության բնակչությունը մոտ 700 հազար էր, ապա 1926 թ. այն անցավ 881 հազարից[9]։ Ժողովրդական տնտե-

---

6 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 69 .

7 «Հայաստանի ՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», Երևան, 1927, էջ 21։

8 «Народное хозяйство Армянской ССР к концу восстановительного периода», Ереван, 1928, стр. 39.

9 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 9.

սության վերականգնմանը համապատասխան արագ տեմպերով աճեց բանվոր-ծառայողների թիվը։ 1925/26 տնտեսական տարում այն հասավ 27 հազարի, 1913 թ. 4956-ի փոխարեն[10]։ Սովետական իշխանությունը վճռական միջոցառումների էր գիմում գործազրկության վերացման համար։ Դա ուներ նաև սոցիալական կարևոր նշանակություն։

Սովետական իշխանության գերագույն նպատակը աշխատավորության նյութական մակարդակի բարձրացումն է, նրա կուլտուր-կենցաղային պայմանների բարելավումը։ Ժողովրդական տնտեսության վերականգնման շնորհիվ զգալի նվաճումներ ձեռք բերվեցին նաև այդ ուղղությամբ։ 1924 թ. դրամական ռեֆորմով մտցվեց դրամի միասնական և կայուն կուրս, որը հնարավորություն տվեց նոր թափ հաղորդելու ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը։ 1923—1926 թթ. հանրապետությունում ապրանքաշրջանառության ընդհանուր գումարը աճեց մոտ 2,5 անգամ[11]։ Աշխատավորության կենսամակարդակի բարձրացման մասին է վկայում վերականգնման շրջանում բնակարանային շինարարության բուռն ընթացքը։ Միայն 1923—1926 թթ. հանրապետությունում կառուցվել է 3579 շենք՝ մոտ 84 հազար քառակուսի մետր ընդհանուր տարածությամբ[12]։ Բարելավվել էր բնակչության բժշկական և կուլտուրական սպասարկումը։ Զգալի միջոցներ էին ծախսվում անգրագիտության վերացման ուղղությամբ։

Հիմնականում ավարտելով ժողովրդական տնտեսության վերականգնումը, կուսակցության XIV համագումարը (1925 թ.), ելնելով լենինյան ցուցումներից, որպես մեր երկրում սոցիալիստական հասարակարգ կառուցելու հիմնական նախապայման առաջ քաշեց երկրի ինդուստրացման անհրաժեշտությունը։ Երկրի սոցիալիստական ինդուստրացումը խիստ կարևոր նշանակություն ուներ նաև նախկինում հետամնաց ազգային ծայրամասերի տնտեսական զարգացման համար։ Դրանով հիմք էր գրվում բոլոր հանրապետությունների տնտեսական զարգացման անհավասարության համահարթման և մեկ միասնական տնտեսական սիստեմի ստեղծման համար։

Դժվար էր մեր երկրում սեփական ուժերով ու միջոցառումներով իրականացնել ինդուստրացման քաղաքականությունը։ Այն ավելի դժվար էր Սովետական Հայաստանում, որովհետև այնտեղ դեռևս չէր ավարտվել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերականգնումը և բավականին թույլ էր տեխնիկական բազան։ Զկային անհրաժեշտ կադրեր և մասնագետներ։ Այդ բոլորից բացի, Հայաստանը բավական հետամնաց գյուղատնտեսական երկիր էր։ 1926 թ. բնակչության միայն 19%-ն էր բնակվում քաղաքներում։ Ընդ որում, նրա մի մասը նույնպես զբաղվում էր գյուղատնտեսությամբ[13]։

Կուսակցության XIV համագումարից հետո Հայաստանի աշխատավորությունը պայքար սկսեց ինդուստրացման քաղաքականությունը կենսագործելու համար (ծավալվեց սոցիալիստական մրցություն, ամենուր պայքար սկսվեց խնայողության, միջոցների տնտեսման համար և այլն)։ Հատուկ ուշադրություն էր դարձվում հանրապետության էներգետիկայի զարգացման վրա։ 1926 թ. շահագործման հանձնվեց Երևանի հիդրոէլեկտրակայանը, ապա սկսվեց Զորա-

10 Նույն տեղում, էջ 42։

11 «Հայաստանի ՍԽՀ ժողովրգական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 42։

12 «Խորհրդային Հայաստանը թվերով», 1923—1927, Երևան, 1929, էջ 44։

13 «Советская Армения за 40 лет», Ереван. 1960, стр. 17.

գէսի և Լենինականի հիդրոկայանների շինարարությունը։ Գործարկվեցին նաև մի շարք գյուղական հիդրոէլեկտրակայաններ (Ղարաքիլիսայի (Կիրովական), Մեղրու, Իջևանի և այլն)։ Գունավոր մետալուրգիայի արագ զարգացման նպատակով ՍՍՀՄ ժողկոմսովետին կից կազմակերպվեց «Հայպղինձ» տրեստ, որը գոյատևեց մինչև 1930 թ.։ Ալավերդու և Ղափանի հանքերն ու պղնձաձուլական գործարաններն արդեն 1928 թ. սկսեցին գործել։ Դա կարևոր նվաճում էր, որն ուներ միութենական նշանակություն։ 1926—1928 թթ. կառուցվեց Ձերժինսկու անվան մեխանիկական գործարանը։ Այդ շրջանում սկզբնավորվեց նաև քիմիական արդյունաբերությունը։ 1927 թ. շահագործման հանձնվեց Երևանի կարբիդի գործարանը։ 1928 թ. սկսած արդյունաբերական զարգացում ստացավ շինանյութերի արտադրությունը (Արթիկտուֆը, Անիպեմզան և այլն), ինդուստրացման հաջողությունները շոշափելի էին նաև սննդի և թեթև արդյունաբերության ճյուղերում։ 1926 թ. հանրապետության խոշոր արդյունաբերության համախառն արտադրանքը ավելացավ 25%-ով, իսկ 1927 թ.՝ հասավ նախապատերազմյան մակարդակի 84,5%-ին։ 1913 թ. համեմատությամբ 1940 թ. այն աճեց 8,7 անգամ։ Այդ շրջանում որոշակի ուրվագծվեցին հանրապետության արդյունաբերական զարգացման հեռանկարային ճյուղերը՝ քիմիական, մետաղամշակման, էներգետիկայի, շինանյութերի արտադրության և այլն։ Նախապատերազմյան հնգամյակների տարիներին հանրապետությունում միայն էլեկտրաշինարարության մեջ ներդրվեց 152,4 միլիոն ռուբլի։ Կառուցվեցին Քանաքեռի, Զորագետի, Իջևանի, Գորիսի և այլ հիդրոկայաններ։ 1937 թ. հանրապետությունում գործում էին 48 էլեկտրակայաններ, որոնց ընդհանուր կարողությունը հասնում էր 76,8 հազար կիլովատտի։ Վերջինս ժողովրդական տնտեսության բազմակողմանի զարգացման հիմնական լծակներից մեկն էր։ 1920—1940 թթ. անցման ժամանակաշրջանում Հայաստանում կառուցվեցին ավելի քան 25 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ։ Դրանցից էին Երևանի սինթետիկ կաուչուկի կոմբինատը, Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանը, Երևանի մեքենաշինական գործարանը, Լենինականի տեքստիլ կոմբինատը, Ալավերդու մետաղաձուլական և պղնձարջասպի գործարանները, Ղափանի հարստացուցիչ գործարանը, Արարատի ցեմենտի, Երևանի շինանյութերի, պահածոների գործարանները և այլն։ 1940 թ. արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ կազմում էր 79%։ Մանր արդյունաբերության տեսակարար կշիռը արդյունաբերության մեջ 1937 թ. կազմեց 84%։ Կառուցվեցին Լենինական—Անիպեմզա, Ղափան—Մինջևան, Լենինական—Արթիկ երկաթուղիները, բարելավվեց հաղորդակցության մյուս միջոցների վիճակը։

Արդյունաբերության բուռն վերելքի շնորհիվ աճեց հանրապետության բանվոր դասակարգը, էլ ավելի բարձրացավ նրա առաջատար դերը։ 1936 թ. բանվոր-ծառայողների թիվը հասավ 105 հազարի[14]։ Վերացվեց գործազրկությունը։ Տնտեսության բոլոր ճյուղերից լիովին արտամղվեցին կապիտալիստական տարրերը։ Դրանք լուրջ տեղաշարժեր էին հանրապետության արդյունաբերության բնագավառում, որոնցով բնորոշվեց սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում։

---

[14] «Социалистическое строительство Армянской ССР», стр. 12.

Արմատական փոփոխություններ տեղի ունեցան հանրապետության գյուղատնտեսության բնագավառում։ Կուսակցության XV համագումարից հետո մեր երկրում լայնորեն արմատավորվեցին կոոպերատիվ ընկերություններն ու արտելները։ Հետևողականորեն կենսագործվում էր լենինյան կոոպերատիվ պլանը։ Առաջին հնգամյակի տարիներին հանրապետությունում կազմակերպվեցին 892 կոլտնտեսություն, որոնցում միավորված էին գյուղացիական տնտեսությունների 37,9%-ը։ 1937 թ. կոլտնտեսությունների թիվը հասավ 1074-ի, միավորելով գյուղացիության 88,7%-ը[15]։ Խոշոր աշխատանքներ կատարվեցին գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման ուղղությամբ։ 1930 թ. Սարդարապատում հիմնվեց առաջին ՄՏԿ-ն, իսկ 1932 թ. դրանց թիվը հասավ 7-ի։ 1937 թ. Հայաստանում գործում էին 24 ՄՏԿ-ներ։ Գյուղատնտեսությանը սպասարկում էին 1358 տրակտոր, 127 կոմբայն և բազմաթիվ այլ մեքենաներ[16]։ Իռիգացիոն շինարարության շնորհիվ ոռոգելի հողատարածությունները հասան 160,6 հազար հեկտարի։ Ոռոգման ցանցի ընդլայնման և նյութատեխնիկական բազայի ամրապնդման շնորհիվ արմատական տեղաշարժեր կատարվեցին գյուղատնտեսական արտադրության մեջ՝ աշխատատար պրոցեսները մեքենայացվեցին, լայնորեն օգտագործվում էին գիտության ու առաջատար փորձի նվաճումները և այլն։ Լենինյան ագրարային քաղաքականության հետևողական կենսագործման շնորհիվ նախապատերազմյան տարիներին գյուղատնտեսության մեջ նույնպես տիրապետող դարձավ սոցիալիստական տնտեսաձևը։ Արմատական փոփոխության ենթարկվեց ինքը՝ գյուղացիությունը։ Նախկին հարստահարված ու կիսաքաղց գյուղացին, կանգնելով սոցիալիստական ուղու վրա, տնտեսական և կուլտուրական զարգացման մեծ թռիչք ապրեց և, համախմբվելով բանվոր դասակարգի շուրջը, ակտիվորեն ներգրավվեց հասարակական-քաղաքական կյանքի մեջ։ Հանձինս կենսագործված լենինյան կոոպերատիվ պլանի, գյուղացիական դարավոր հարցը գտավ իր իսկական լուծումը։

Նախապատերազմյան հնգամյակների տարիներին ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Սովետական Հայաստանում կենսագործվեց կուլտուրական հեղափոխությունը, առանց որի հնարավոր չէր մեր երկրում կառուցել սոցիալիստական հասարակարգը։ Նախասովետական Հայաստանի բնակչության 80%-ից ավելին անգրագետ էր։ Նորաստեղծ սովետական իշխանությունը միջոցներ հատկացրեց բոլոր գյուղերում դպրոցներ և լիկկայաններ բացելու համար, որպեսզի վերացվի այդ դարավոր չարիքը։ 1921—1928 թթ. միայն գյուղական վայրերում 108 դպրոցական շենք կառուցվեց, իսկ 1929—1932 թթ.՝ 383։ 1933 թ. հանրապետությունում 1100 դպրոց էր գործում, որտեղ սովորում էին 180 հազար աշակերտներ։ Առաջին հնգամյակի տարիներին Հայաստանում լիովին իրագործվեց ընդհանուր պարտադիր տարրական կրթությունը։ 1933—1940 թթ. կառուցվեցին ևս 460 դպրոցներ, որոնց մեծ մասը 7-ամյա կրթության համար[17]։

Հատուկ ուշադրություն դարձվեց բարձրագույն դպրոցի կազմակերպման վրա։ 1920 թ. դեկտեմբերին հիմնվեց Երևանի պետական համալսարանը, որի

---

15 «Советская Армения за 40 лет», стр. 70.

16 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 48.

17 «Культурное строительство Армянской ССР», Ереван, 1972, стр. 14.

ֆակուլտետները հետագայում հիմք հանդիսացան գյուղատնտեսական, շինարարական, բժշկական, կոոպերատիվ, մանկավարժական և այլ ինստիտուտներ կազմակերպելու համար։ Հիմնվեց գիտության և արվեստի ինստիտուտը, իսկ 1935 թ.՝ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը, որտեղ բեղմնավոր աշխատանք ծավալեցին շատ ականավոր գիտնականներ[18]։

Սոցիալիստական շինարարության նախապատերազմյան ստեղծագործ տարիները նպաստավոր եղան նաև հանրապետության բնակչության աճի համար։ Եթե 1926 թ. Հայաստանն ուներ 881 հազար բնակիչ, որի միայն 19%-ն էր ապրում քաղաքում, ապա 1939 թ. այն հասավ 1.282 հազարի, որից քաղաքային բնակչությունը 28,6% էր կազմում[19]։ Բնակչության բնական աճից բացի, այդ շրջանում մայր հայրենիք էին վերադառնում բազմահազար սփյուռքահայեր։ Սովետական կառավարության թույլտվությամբ և օժանդակությամբ 1921—1936 թթ. Հայաստան են ներգաղթել ավելի քան 42 հազար տարադիր հայեր[20]։

Նախապատերազմյան հնգամյակների տարիներին հանրապետությունում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխությունների շնորհիվ վերացան շահագործող դասակարգերն ու նրանց մնացորդները և է՛լ ավելի ամրապնդվեց բանվորագյուղացիական դաշինքը։ Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում հաղթանակեց սոցիալիստական հասարակարգը։

Սովետական ժողովուրդների խաղաղ ստեղծագործ աշխատանքներն ընդհատվեցին մեր երկրի վրա ֆաշիստական հորդաների ուխտադրուժ հարձակմամբ։ Բոլոր ժողովուրդների հետ մեկտեղ հայ ժողովուրդը սրբազան պայքարի ելավ իր սոցիալիստական հայրենիքը փրկելու համար։ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը շտապ միջոցառումներ ձեռնարկեց հանրապետության ժողովրդական տնտեսությունը պատերազմական պահանջների համապատասխան վերակառուցելու և նյութական միջոցներ մոբիլիզացնելու համար։ Հայաստանի աշխատավորության մարտական նշանաբանը դարձավ «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» լոզունգը։ Հանրապետության մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ արագ վերակառուցվեցին զենք ու զինամթերք արտադրելու համար։ 1942 թ. վերջերին ժողովրդական տնտեսությունը լիովին դրվեց ռազմական ռելսերի վրա։ Հանրապետության էկոնոմիկան, հաղթահարելով բազում դժվարություններ, տարեցտարի ընդլայնում էր իր արտադրությունը։ Մեծ աշխատանքներ կատարվեցին նաև բանակի կարիքների համար հանդերձանքի և ռազմական գույքի արտադրության կազմակերպման ուղղությամբ։ Ռազմաճակատ մեկնածներին փոխարինում էին կանայք, պատանիներն ու ծերունիները, որոնք հերոսական աշխատանք էին կատարում թիկունքում։ Բացի այդ, Հայաստանի աշխատավորներն իրենց խնայողություններից ռազմական ֆոնդերը մուծեցին 207,6 միլիոն ռուբլի։ Կառուցվեցին «Հայաստանի կոմերիտ-

---

18 «Հայ ժողովրդի պատմություն», հ. VII, Երևան, 1967, էջ 450։

19 «Экономика и культура Армении к 50-летию образования СССР», Ереван, 1973, стр. 20.

20 «Հայ ժողովրդի պատմություն», հ. VII, էջ 577։

միություն», «Հայաստանի կոլտնտեսական», «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուները և «Սովետական Հայաստան», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» ավիաէսկադրիլիաները։ Ռազմաճակատ ուղարկվեց 200 հազարից ավելի ծանրոց։ Պատերազմի տարիներին հարյուր հազարավոր հայորդիներ, Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ միասին, մարտնչում էին գերմանական զավթիչների դեմ։ Հայաստանում ձևավորվեցին 89-րդ, 390-րդ, 408-րդ, 409-րդ, 261-րդ և 76-րդ ազգային դիվիզիաները, որոնք փայլուն էջեր դրեցին հայրենական պատերազմի տարեգրության մեջ։ Հայաստանի 103 զավակներ արժանացան Սովետական Միության հերոսի կոչման, իսկ Նելսոն Ստեփանյանը՝ կրկնակի հերոսի։ Մոտ 70 հազար մարտիկներ և հրամանատարներ իրենց սխրագործությունների համար պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով։ Սովետական Միության տաղանդավոր զորավարների շարքերում էին հայ ժողովրդի զավակներ Հ. Բաղրամյանը, Ա. Խուդյակովը, Հ. Իսակովը և մոտ վաթսուն գեներալներ։ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 25-րդ տարեդարձի առթիվ ՀամԿ(բ)Կ Կենտկոմը և ՍՍՀՄ Ժողկոմսովետը գրում էին. «Հայրենական պատերազմի տարիներին հայ ժողովուրդը պատվով կատարեց իր պարտքը հայրենիքի հանդեպ։ Հայ ռազմիկները, Սովետական Միության մյուս ժողովուրդների զավակների հետ միասին, անձնվիրաբար պաշտպանում էին Հայրենիքի ազատությունն ու անկախությունը։ Հայաստանի բանվորները, կոլտնտեսականները և մտավորականությունն անդուլ կերպով աշխատում էին թշնամու դեմ հաղթանակ նվաճելու համար»[21]։ Ֆաշիզմի դեմ մղվող պայքարին ակտիվորեն մասնակցեց նաև սփյուռքահայությունը։

Հայրենական մեծ պատերազմը հաղթանակով ավարտելուց հետո սովետական ժողովուրդը կրկին ձեռնամուխ եղավ երկրի տնտեսության վերականգնման աշխատանքներին։ Հանրապետության ժողովրդական տնտեսությունն անհրաժեշտ էր վերակառուցել խաղաղ ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան։ 4-րդ հնգամյա պլանով նախատեսվում էր սեղմ ժամկետում ավարտել այդ վերակառուցումը և արդյունաբերական արտադրանքը կրկնապատկել, իսկ գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնել 75%-ով։ Հատուկ ուշադրություն էր դարձվում զարգացման լայն հեռանկարներ ունեցող գունավոր մետալուրգիայի, էներգաարդյունաբերության, մետաղամշակության և մեքենաշինության, քիմիայի, շինանյութերի, սննդի և թեթև արդյունաբերության զարգացման վրա։ Հնգամյակի տարիներին կառուցվեցին մի շարք էլեկտրակայաններ, որոնցից ամենաբարդն ու խոշորը Սևանի ստորերկրյա հիդրոէլեկտրակայանն էր։ Հնգամյակի ընթացքում գունավոր մետալուրգիայի արտադրությունն ավելացավ 80%-ով, քիմիական արտադրությունն աճեց 2,5 անգամ, մեքենաշինական արդյունաբերության արտադրանքը՝ 18 անգամ և այլն։ 4-րդ հնգամյակի տարիներին կառուցվեցին Երևանի կաբելի, էլեկտրամեքենաշինական, ալյումինի, հիդրոտուրբինների, «Պոլիվինիլացետատ», ճշգրիտ էլեկտրասարքավորումների և այլ գործարաններ։ Շեշտակիորեն ավելացավ շինանյութերի, թեթև ու սննդի արդյունաբերության արտադրանքը։ Աճեց բանվոր-ծառայողների թիվը. եթե

21 «Սովետական Հայաստան», 25.XI.1945։

1945 թ. հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ աշխատում էր 155 հազար մարդ, ապա 1950 թ.՝ 237 հազար[22]։

Հնգամյակի տարիներին հատուկ ուշադրություն էր դարձվում գյուղատնտեսության զարգացման վրա։ Առաջին հերթին ամրապնդվեց նրա նյութա-տեխնիկական բազան։ ՄՏԿ-ների թիվը 1940 թ. 38-ից, 1950 թ. հասավ 46-ի, իսկ տրակտորների թիվը՝ 1955-ից 2055-ի։ Մոտ երեք անգամ ավելացավ հացահատիկային կոմբայնների թիվը[23]։ Անընդհատ ավելանում էր գյուղում աշխատող մեխանիզատորների թիվը։ Հնգամյակի տարիներին կառուցվեցին Սպիտակի, Լոռու, Ադիամանի, Գառնիի և այլ ջրանցքներ, որոնց շնորհիվ ոռոգելի հողատարածությունն ավելացավ մոտ 15 հազար հեկտարով։ Գյուղատնտեսական արտադրության բարձրացման գործում որոշակի հաջողությունների հասան կոմերիտական-երիտասարդական բրիգադները, որոնց թիվը 1948 թ. անցնում էր 1800-ից։

Չորրորդ հնգամյակի տարիներին ձեռք բերված հաջողությունների շնորհիվ ղղալի չափով բարելավվեց աշխատավորության նյութական դրությունը (վերացվեց մթերքների բաշխման քարտային սիստեմը, իջեցվեցին ապրանքների գները և այլն)։ Նոր թափ ստացավ բնակարանային և կուլտուր-կենցաղային հիմնարկների շինարարությունը։

Հետպատերազմյան շրջանում նորից սփյուռքահայ գաղթօջախներից բազմահազար դիմումներ էին ստացվում հայրենիք վերադառնալու համար։ ՀՍՍՀ-ի միջնորդությամբ ՍՍՀՄ Ժողկոմսովետը 1945 թ. նոյեմբերի 21-ին հատուկ որոշում ընդունեց ներգաղթը կազմակերպելու մասին։ Հանրապետության կուսակցական և սովետական մարմինները միջոցառումների լայն ծրագիր մշակեցին սովետական նոր քաղաքացիներին տեղավորելու, աշխատանքի և ուսման մեջ ընդգրկելու համար։ Իրանից, Սիրիայից, Հունաստանից, Ռումինիայից, Բուլղարիայից, Ֆրանսիայից և այլ երկրներից 1946—1948 թթ. մոտ 100 հազար հայեր վերադարձան հայրենիք և ակտիվորեն ձեռնամուխ եղան սոցիալիստական շինարարությանը։

Ազգային հանրապետությունների էկոնոմիկան բուռն վերելք ապրեց 1950-ական թվականներին, երբ մոր երկիրը թևակոխեց սոցիալիզմի վերջնական հաղթանակի ժամանակաշրջանը։ ՀՍՍՀ արդյունաբերության մեջ շարունակում էին առաջատար դեր խաղալ գունավոր մետալուրգիան, մեքենաշինությունը և քիմիական արդյունաբերությունը։ Վերջինս 1946 թ. համեմատությամբ 1955 թ. աճել էր 5,7 անգամ։ 1950-ական թվականներին բարձր տեմպերով աճեց պղնձի, ալյումինի, մոլիբդենի և այլ մետաղների արտադրությունը։ Արդյունաբերության արտադրանքը 1913 թ. համեմատությամբ 1958 թ. աճեց մոտ 55 անգամ։ Ավելի արագ էր աճում հանրապետության ծանր արդյունաբերությունը. եթե 1928 թ. նրա համախառն արտադրանքը կազմում էր ամբողջ արդյունաբերական արտադրանքի 24%-ը, 1940 թ.՝ 41, ապա 1958 թ.՝ 60%-ը[24]։ Սա խոշոր նվաճում էր։ Մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությամբ Հայաստանն առաջ էր անցել մի շարք զարգացած կապիտալիստական երկրներից։ 1950-ական թվականներին շարք մտան

---

22 «Экономика и культура Армении к 50-летию образования СССР», стр. 245.

23 «Сельское хозяйство Армянской ССР», Ереван, 1961, стр. 11.

24 «Экономика и культура Армении к 50-летию образования СССР», стр. 7.

արդյունաբերական այնպիսի ձեռնարկություններ, ինչպիսիք են Քաշարանի պղնձամոլիբդենային կոմբինատը, Երևանի էլեկտրալամպերի, շինանյութերի, կոնյակի, Թումանյանի հրակայուն աղյուսի գործարանները, Շահումյանի մետաքսագործվածքային, Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկաները և այլն։ Հատկանշական է, որ այս էտապում խիստ փոխվեց հանրապետության արդյունաբերական աշխարհագրությունը. համարյա բոլոր շրջաններում և նորաստեղծ ավաններում արտադրությունը մեծ զարգացում ապրեց։ Դա սոցիալական շատ կարևոր նշանակություն ուներ։ Ծանր արդյունաբերության բազմակողմանի զարգացման հետ մեկտեղ մեծ ուշադրություն էր դարձվում սննդի և թեթև արդյունաբերության զարգացմանը, որի արտադրանքի նկատմամբ մեծ պահանջարկ կար ամբողջ երկրում։

Ցտեսնված բուռն վերելքի շնորհիվ, բնականաբար, ավելացավ հանրապետության բանվոր-ծառայողների թիվը. եթե 1940 թ. արդյունաբերության մեջ աշխատողների թիվը 34,5 հազար էր, 1950 թ.՝ 69,1 հազար, ապա 1955 թ.՝ 98,3 հազար[25]։ 1958 թ. ժողովրդական տնտեսության մեջ աշխատող բանվոր-ծառայողների թիվը 361 հազար էր[26]։

Արդյունաբերության ընդլայնման և տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման շնորհիվ հանրապետության արդյունաբերական արտադրանքը լայն ճանաչում գտավ նաև մեր երկրի սահմաններից դուրս։ 1958 թ. Հայաստանի մեքենաշինական, հաստոցաշինական և էլեկտրատեխնիկական արտադրանքն արտահանվում էր աշխարհի 32 երկրներ։ Արտահանվում էին արդյունաբերական արտադրանքի ավելի քան 60 տեսակներ։ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40 տարիների ընթացքում հանրապետությունում կառուցվել էր շուրջ 500 գործարան և ֆաբրիկա։ 1913 թ. համեմատությամբ 1960 թ. արդյունաբերական արտադրանքն աճել էր ավելի քան 68 անգամ[27]։ Նույն ժամանակաշրջանում կառուցվել էին 30-ից ավելի խոշոր էլեկտրակայաններ, որոնք արտադրում էին 2,7 միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա։

Սոցիալիզմի վերջնական կառուցման ժամանակաշրջանում էական տեղաշարժեր եղան նաև գյուղատնտեսության բնագավառում։ ՍՄԿԿ Կենտկոմի 1953 թ. սեպտեմբերյան պլենումը քննարկեց գյուղատնտեսության հետագա զարգացման հարցերը և մի շարք միջոցառումներ մշակեց այդ ուղղությամբ (կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդում, գյուղացիության շահագրգռվածության բարձրացում, մթերումների կարգավորում և այլն)։ Զգալի չափով ավելացվեց գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումների չափը. եթե 1921—1953 թթ. հանրապետության գյուղատնտեսության մեջ ներդրվել էր 2540 միլիոն ռուբլի, ապա միայն 1954—1959 թթ.՝ 1.631 միլիոն ռուբլի[28]։ Գյուղատնտեսության մեքենայացված սպասարկումը բարելավելու նպատակով 1958 թ. ՄՏԿ-ները վերակառուցվեցին և նրանց տեխնիկան վաճառվեց կոլտնտեսություններին։ Զգալի չափով ավելացան ոռոգելի հողատարածությունները։ Կենսագործելով կառավարության առաջադրանքները, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը լուրջ նվաճում-

25 «Советская Армения за 40 лет», стр. 70.

26 Նույն տեղում, էջ 157։

27 «Народное хозяйство Армянской ССР в 1963 г.», Ереван, 1964, стр. 30—31.

28 «Советская Армения за 40 лет», стр. 141.

ների հասավ, որի համար 1958 թ. Հայկական ՍՍՀ-ն պարգևատրվեց Լենինի շքանշանով։

Հայաստանի աշխատավորությունը ՍՍՀՄ մյուս ժողովուրդների եղբայրական ընտանիքում մեծ նվաճումների հասավ մեր երկրում զարգացած սոցիալիստական հասարակարգի կառուցման ժամանակաշրջանում։ Միայն 1960—1965 թթ. մեր հանրապետությունում կառուցվել են 300-ից ավելի արդյունաբերական ձեռնարկություններ ու խոշոր արտադրամասեր։ Դա հնարավորություն տվեց մոտ 600 տեսակի նոր ապրանքներ արտադրել[29]։ 1960-ական թվականներին նույնպես հատուկ ուշադրություն էր դարձվում արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխման և արտադրության մասնագիտացման հարցերի վրա։ Այդ ժամանակաշրջանում արդյունաբերական բազմաթիվ մասնաճյուղեր կառուցվեցին հանրապետության հեռավոր շրջաններում, որտեղ աշխատուժի բավականին ավելցուկ գոյություն ուներ։ Դրա շնորհիվ ձևավորվեցին նոր ավաններ ու քաղաքներ, տարեցտարի աճեց բանվոր դասակարգի թիվը։ Եթե 1959 թ. Հայաստանում կար 249 հազար բանվոր, ապա 1965 թ.՝ 350 հազար[30]։ Արդեն բանվոր դասակարգը հիմնականում համալրվում էր միջնակարգ կամ պրոֆտեխնիկական կրթություն ունեցող երիտասարդներով։ Բուռն կերպով աճեց արտադրատեխնիկական մտավորականության թիվը (1965 թ. այն հասնում էր մոտ 40 հազարի)։ Արտադրության բազում առաջավորներ այդ տարիներին պարգևատրվեցին կառավարական շքանշաններով ու մեդալներով, արժանացան սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։ Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման բնագավառում ձեռք բերած նվաճումները հնարավորություն էին ընձեռում անընդհատ բարձրացնել ժողովրդի կենսամակարդակը, բարելավել նրա կուլտուր-կենցաղային պայմանները։ Սովետական կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ զգալիորեն աճեցին բնակչության եկամուտները, բարձրացավ գնողունակությունը, հանգստի սպասարկումը և այլն։ Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության մեջ երբեք տնտեսական, քաղաքական ու կուլտուրական այսպիսի լիառատ կյանքով չի ապրել։ Ժողովրդական տնտեսության, գիտության, գրականության ու արվեստի բնագավառներում հայ ժողովրդի նվաճումները համամիութենական և համաշխարհային ճանաչում են ստացել։

Սոցիալիստական շինարարության ամեն մի էտապ իր որոշակի ճշգրտումներն է մտցնում ժողովրդական տնտեսության զարգացման մեջ, ելնելով օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններից որոշ փոփոխությունների ենթարկում այն։ 10-րդ հնգամյա պլանով, ելնելով կոնկրետ պայմաններից, նախատեսվում է 42 նոր, խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ կառուցել հանրապետությունում, որից 29-ը՝ գյուղական վայրերում կամ փոքր քաղաքներում։ Հանրապետության արդյունաբերական մասնագիտացման շնորհիվ 1970-ական թվականներին հիմնական առաջատար ճյուղերից բացի լայնորեն զարգացան էլեկտրոնային արդյունաբերությունը, միկրոբիոլոգիան և բժշկական արդյունաբերությունը։ Կարևոր նվաճում պետք է համարել այն,

---

29 Ռ. Մուրադյան, ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թթ. հնգամյա պլանի՝ ՍՄԿԿ XXII համագումարի դիրեկտիվների նախագծի մասին, Երևան, 1966, էջ 5—6։

30 «Итоги Всесоюзной переписи населения 1959 г.», сводный том, М., 1962, стр. 55—56.

որ 9-րդ հնգամյակում Հանրապետության էներգետիկ բազան այնքան հզորացավ, որ իր կարիքները բավարարելուց բացի էլեկտրաէներգիա էր մատակարարում Անդրկովկասի միացյալ համակարգին։ ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումի որոշումների հետևողական կենսագործման շնորհիվ 1970-ական թվականներին զգալիորեն ավելացավ գյուղատնտեսական արտադրանքի միջին ծավալը (նախկին հնգամյակի համեմատությամբ 21,9%-ով), ամրապնդվեց նրա նյութատեխնիկական բազան. միջոցառումներ ձեռնարկվեցին նրա մասնագիտացման ու համակենտրոնացման, աշխատատար պրոցեսների ավտոմատացման ուղղությամբ։ Գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները լայնորեն արմատավորվում են տնտեսության բոլոր ճյուղերում։

Հանրապետության ժողովրդական տնտեսության հեռանկարային զարգացման հիմնական ուղղությունները որոշելիս կուսակցությունը հաշվի է առնում բոլոր գործոնները և առաջին հերթին գիտության ու արտադրության փոխադարձ կապի, նրանց էֆեկտիվության բարձրացման անհրաժեշտությունը։ 10-րդ հնգամյակում նախատեսվում է ինտենսիվացնել արտադրությունը, և որ գլխավորն է, հիմնականում նորացնել արտադրական ֆոնդերը (70%-ով)։ Խոշոր միջոցառումներ են մշակված գյուղատնտեսական մթերքների վերամշակման բազան ամրապնդելու, գիտության և առաջավոր փորձի նվաճումներն արտադրության մեջ արմատավորելու ուղղությամբ։ Նախատեսվում է կենսագործել գյուղատնտեսության հետագա մասնագիտացման ու կենտրոնացման քաղաքականությունը (կառուցել պետական, պետական-կոլտնտեսային և միջտնտեսային ֆաբրիկաներ և համալիրներ)։ Այդ բոլորը կնպաստեն սովետական մարդու կուլտուր-կենցաղային պայմանների բարելավմանը, նրա բարեկեցության աճին։

Այսպիսով, վեց տասնամյակ առաջ կործանման եզրին կանգնած հայ ժողովուրդը սովետական իշխանության շնորհիվ սեղմ ժամկետում շտկեց օտար և սեփական հարստահարիչների լծի տակ կորցրած մեջքը և բռնեց տնտեսական ու կուլտուրական վերելքի ուղին։ Սովետական ժողովուրդների բազմազգ ընտանիքում հայ ժողովրդի ձեռք բերած վիթխարի նվաճումները լենինյան ազգային քաղաքականության կենսագործման փայլուն վկայությունն են։

ОКТЯБРЬ И ВОЗРОЖДЕНИЕ АРМЯНСКОГО НАРОДА

ГУРГЕН ГЕГАМЯН

Резюме

Великая Октябрьская социалистическая революция открыла новую эпоху в истории человечества. Она принесла спасение и освобождение также армянскому народу. В братской семье советских народов, при их всесторонней помощи Советская Армения вступила на путь экономического и культурного расцвета. В годы предвоенных пятилеток были осуществлены индустриализация страны, коллективизация сельского хозяйства, победила культурная революция. Трудящиеся Армении добились еще больших успехов в послевоенный период, и, особенно, когда наша страна вступила в период развитого социализма.